



Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


3
Ա. ԿԻԴՄԱՆ



ԻՐ ԳԼՈՒ
ՏԵՐ ԿԱՇՈՒՆ



ՊԵՀՀՐԱՅ • 1934 • ՅԵՐԵՎԱՆ



2

H 9PM
5-39a

ફા. કબીર લખાણ

Г.П.Б. в ЛНГРД
А. 1935 г.
№ 20

ԻՐ ԳԼԽԻ ՏԵՐ ԿԱՏՈՒՆ

ԱՐԵՎՈՅԱԿԱՆ ՅԵՐԱԿԱՆ ՀԱՐԱՄ

Parque. La Banda. 11. 9. 19

'Gharibn' U. 'q' U. Is it UP or q. It

A decorative horizontal line with two fleur-de-lis symbols at the center.

5402

ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՄԱՐԱԿՑՈՒԹՅՈՒՆ
ՅԵՐԵՎԱՆ 1934

Տառ. խօֆազիթ, Ա. Հ ալրլան
Տելու. խօփազիթ, Ա. Գ աւոյարլան
Լիսոգրաֆիական նպատիկ, Ա. Մ ի ի բ մ ր լ ա ն
Մրգագրիկ, Պ. Ա բ ա լ ա ն

Դասընթաց 8597, սպառ. 1014, երան. 3080, սիրու 4000

Համամետ և արտադրության՝ 17 համեմ 1934 թ.
Սուսրացըմէ և սուսպրության՝ 29 սեպտեմբերի 1934 թ.



I

Այս բանը պատահել է այն ժամանակ, յերբ ընտանի կենդանիները գեռ վայրենի եյին։ Շունը վայրենի յեր, ձին ել եր վայրենի, կամ ել եր վայրենի, վոշաւարն ել եր վայրենի և խոզն ել եր վայրենի, այնպիս վայրենի, ինչպես վայրենին կլինի, և բոլորն ել թափառում եյին խոնակ, վայրի անառաներում, վայրենի ու մենակը Բայց բոլոր վայրենի կենդանիների մեջ ամենից վայրենին կատառն եր։ Վայրենի կատառն իր զլիսի տերն եր, ման եր գալիս ինքնագլուխ, և ամեն տեղ նրա համար մեկ եր։

Իհարկե, մարդն ել եր վայրենի, շատ վայրենի։ Նա սկսեց իր վայրենի զրությունից դուքս գալ միայն այն ժամանակ, յերբ պատահեց կինարմատին, և կինարմատն ասաց նրան, թե իրեն դուք չի գալիս այդպիսի վայրենի կյանքը։

կինարմատը գտավ մի հարմար չոր քարայր, վորտեղ քնելն ավելի լավ եր, քան թե մի կույտ խոնավ տերեների վրա: Յեվ նա ավազ փըռեց հատակին և խարույկ վատեց իր այրի խորքում: Այդ յերեկո նրանք կերան վայրենի վոշխարի միս, շիկացած քարերի վրա տապակած և վայրենի սխտորով և վայրենի պղպեղով համեմած: Կերան և վայրենի յեզան վոսկորների ծուծը, վրան ել վայրենի կեռաս: Հետո տղամարդը գոհ և բախտավոր մեկնվեց խարույկի առաջ ու քնեց, իսկ կինարմատը նստեց ու սկսեց իր մագերը սանրել: Հետո վերցրեց վոշխարի ուսի մեծ վոսկոր՝ տափակ թիակը և սկսեց նայել նրա վրա գծած կախարդական նշաններին: Նորից խարույկին փայտ տվելացրեց. խոնավ, վայրի անտառների բոլոր վայրենի կենդանիները հավաքվեցին միատեղ և նայում ելին հեռվում վառվող կրակին, զարմանում ելին ու չելին հասկանում, թե այդ ինչ բան ե:

Հետո վայրենի ձին սմբակը գետնին խփեց ու ասաց:

—Ո՞, իմ բարեկամներ և իմ շարակամներ, ինչու համար տղամարդն ու կինարմատը այրի խորքում կրակ են արել: Դրանից արդյոք մեզ վնաս չի հասնի:

Վայրենի շունը բարձրացրեց իր վայրենի քիթը, տապակած մսի հոտն առավ ու ասաց.

—Ցես կզնամ այնտեղ, մտիկ կտամ, կնայեմ և հետո ձեզ կասեմ: Ինձ հարցնեք, այստեղ յես վատ բան չեմ տեսնում, բացի լավությունից: Գնանք ինձ հետ, կատու:

—Վո՞չ, —պատասխանեց կատուն, —յես այն կատուն եմ, վորն իր գլխուման և գալիս, և բոլոր տեղերն ինձ համար համահավասար են: Ցես չեմ դա:

—Ռւրեմի, մենք յերբեք ել բարեկամ չենք լինի, —ասաց վայրենի շունը և վազեց դեպի այրը: Բայց հենց վոր նա մի քիչ հեռացավ իր տեղից, կատուն ինքն իրեն մտածեց.

—Բոլոր տեղերն ինձ համար համահավասար են: Ինչու համար յես ել չգնամ նայեմ, դիտեմ ու նորից յետ դանում, յեթե ուզենամ:

Ցեվ նա ծածուկ գնաց վայրենի շան յետեկից ու թաք կացավ մի այնպիսի տեղ, վորտեղից կտրող եր լսել ամեն բան:

Վայրենի շունն այրի մուտքին մոտեցավ, գնչով վեր բարձրացրեց ձիու չոր մորթին, ներս քաշեց տապակած մսի հրաշալի հոտը: Կինարմատը լսեց շան մոտենալը, ծիծաղեց ու ասաց.

—Ահա յեկել ե առաջին գաղանը: Դու ինչ ես ուզում, վայրի անտառների վայրենի գաղան:



Ու շունը պատասխանեց.

— Ո՞, իմ թշնամի և իմ թշնամու կին, այդ բնչ ե, վոր այդքան տհուշ հոս և տալիս վայրի անտառներում:

Այն ժամանակ կինարմատը վերցրեց տապակած մսի վսկորը և զցեց վայրենի շան առաջ ու ասաց.

— Կեր ու համը տես, վայրի անտառների վայրենի գաղան:

Վայրենի շունն սկսեց կրծել վսկորը, և իրեն այնպես թվաց, թե խլի այդպիսի համեղ բան չի կերել ու ասաց.

— Ո՞ւ, իմ թշնամի և իմ թշնամու կին, ելի տուր ինձ:

Ու կինարմատը պատասխանեց.

— Վայրի անտառների վայրենի զազան, ոքնիր ցերեկն իմ ամուսնուն վորս անելիս և պահիր գիշերն այս այրը, այն ժամանակ յես քեզ, ինչքան վոսկոր ուղես, կտամ խորոված մսից:

— Հըմ՝, — ասաց կատուն ինքն իրեն, — սա շատ խելացի կինարմատ երդել, բայց այնքան խելացի չե, ինչքան յես:

Վայրենի շունը ներս սողաց այրը, գլուխը դրեց կինարմատի ծընկներին ու ասաց.

— Ո՞ւ, իմ բարեկամ և իմ բարեկամի կին, յես կոզնեմ ցերեկը քո ամուսնուն վորս անելիս ու կպահեմ գիշերը ձեր այրը:

— Հըմ՝, — ասաց ինքն իրեն կատուն, — այդ շուն ե յեղել:

Ասաց ու նորից յետ դարձավ խոնավ վայրի անտառները, թափահարելով իր վայրենի պոչը վայրենի առանձնության մեջ: Բայց նա վոչ վորի բան չպատմեց այդ մասին:

Գարթնեց քնից տղամարդն ու հարցրեց.

— Ի՞նչ ե անում այսոեղ այս վայրենի շունը:

Ու կինը պատխասանեց.

— Հիմա սրան պետք է կանչենք վոչ թե վայրենի շուն, այլ առաջին ընկեր, վորովինեակ սա միշտ և ընդմիշտ կլինի մեր ընկերը: Վորսի գնալիս, միշտ ել հետդ տար:


II

Մյուս որը յերեկոյան կինը քաղեց գետափյա մարգագետնից մի գիրկ կանաչ խոտ ու չորացրեց խարույկի առաջ: Կանաչն սկսեց մի այնպիսի անուշ հոտ բուրել, ինչպես նոր հնձած և քիչ չորացած խոտը: Հետո նա նստեց այրի մուտքի առաջ ու սկսեց ձիու կաշուց քաշած փոկերը հյուսել ու սանձ զործել:

Խոնավ, վայրի անտառների բոլոր վայրենի կենդանիները, հավաքված միատեղ, չելին կարողանում հասկանալ, թե ի՞նչ յեղավ վայրենի շունը: Վերջապես վայրենի ձին իր վալրենի սմբակը գետնին խփեց ու ասաց:

— Յես կինամ, կտեսնեմ, կդամ ու կտեմ ձեզ: Կատու, գնանք միասին:

— Վո՞չ, — պատասխանեց կատուն, — յես այն կատուն եմ, վոր իր գլխու ման ե զալիս, և բոլոր տեղերն ինձ համար հավասար են: Յես չեմ դա:



Բայց վայրենի կատուն դարձյալ ծածուկ-ծածուկ ձիռ յետնից
դնաց, թագնվեց այնպես մի տեղ, վորտեղից կարող եք ամեն ինչ լսել:
— Ահա և յերկրորդը: Ի՞նչ ես ուզում, վայրի անտառների վայրենի, —
հարցրեց կինարմատը:

Վայրենի ծին պատասխանեց.

— Ո՞ւ, իմ թշնամի և իմ թշնամու կին, ուր ե մեր վայրենի շունը: Կինարմատը ծիծաղելով ասաց.

— Վայրի անտառների վայրենի գազան, դու յեկել ես վոչ թե վայրենի շան համար, դու յեկել ես համեղ կանաչի համար:

Յեվ վայրենի ծին մոտեցավ նրան ու ասաց.

— Դու ճիշտ ես ասում: Կանաչ տուր ուտեմ:

— Վայրի անտառների վայրի գազան, ծոփը գլուխդ և, ինչ վոր տալիս եմ, կրիր մեջքիդ վրա, այն ժամանակ որական յերեք անգամ քեզ կանաչ խոտ կտամ, — ասաց կինը ճիռն:

— Ե՞ւ, — ասաց կատուն, — այս կինարմատը շատ խելացի կինարմատ ե յեղել, բայց այնքան խելացի չե, ինչքան յես:

Վայրենի ծին կուցրեց իր վայրենի գլուխը, և կինարմատը սանձը գցեց նրա բերանը, իսկ վայրենի ծին ասաց.

— Ո՞ւ, իմ տիրոջ կին, յես այդ հրաշալի կանաչի համար կծառայեմ քեզ:

— Ե՞ւ, — ասաց կատուն ինքն իրեն, — այդ ծին շատ հիմար ե: — Ասաց ու յետ դարձավ վայրի անտառները, թափահարելով իր վայրենի պոչը վայրենի առանձնության մեջ: Բայց վոչ մեկին վոչինչ շպատմեց:

Յերբ մարդն ու շունը վերադարձան վորսից, մարդը հարցրեց.

— Ի՞նչ ե անում այստեղ այդ վայրենի ծին:

Կինը պատասխանեց.

— Հիմա ել չպետք ե դրան վայրենի կանչենք, նա մեր առաջին ծառան կլինի ու մեզ միշտ, ընդմիշտ տեղից տեղ կտանի: Վաղը հեծիր նրան վորսի գնալիս:

Չին դարձավ մարդու առաջին ծառան:

III

Մյուս որը վայրենի կովը, զգուշությամբ, գլուխը կուցրած, վոր-պեսզի իր վայրենի պողերը շխճճվեն վայրի ծառերի ճյուղերի մեջ, նույնպես յեղավ քարայրի մոտ: Կատուն ել նրա յետելից ծածուկ յեկալ ու թաղնվեց մի այնպիսի տեղ, վորտեղից կարող եր ամեն ինչ լսել Յեվ ամեն բան առաջվա պես անցավ: Ու յերբ կովը խստացավ ամեն որ կաթ տալ այն հրաշալի խտորի փոխարեն, կատուն դարձյալ վերադարձավ իր վայրի անտառները, թափահարելով վայրենի պոչը վայրենի առանձնության մեջ:



Յերբ մարդը, ձին, շունը վորսից վերադարձան, մարդը հարցրեց, թե այստեղ ի՞նչ է անում վայրենի կովը:

— Հիմա նրան ել վայրենի կով չպետք է անվանենք, այլ մեզ կերակրող Սրանից հետո նա մեղ կտա տաք, սպիտակ կաթ, և յես կնայեմ, կիսնամեմ նրան, յերբ դու, քո առաջին ընկերը և քո առաջին ծառան վորսի գնալու լինեք:

Կովը գարճակ մարդուն կերակրողը

Մյուս որը մի առժամանակ կատուն սպասեց, թե արդյոք վայրենի գազաններից մեկը գնալու չ՞մ դեպ այրը Տեսավ, վոր գնացող չկա, ինքը վեր կացավ ու մենակ ուղեկորչեց դեպ այրը Ու նա տեսավ կովին կաթ տալիս, տեսավ այրի խորքում վառված խարույկը, առավ տաքացրած կաթի հոտը:

Յեվ կատուն ասաց.

— Ո՞ւ, իմ թշնամի և իմ թշնամու կին, ուր ե գնացել վայրենի կովու:

Կինարմատը ծիծաղեց ու ասաց.

— Վայրի անտառների վայրենի գաղան, վերադարձիր վայրի անտառները, իմ այրի համար ել պետք չեն՝ վոչ ընկերներ, վոչ ծառաներ:

— Յես վոչ ընկեր եմ, վոչ ել ծառա: Յես իմ գլխու ման յեկող կատուն եմ, յես ել մտնել եմ ուզում քո այրը:

— Դու այն կատուն ես, վոր ինքնազլուխ ման ես գալիս, և բոլոր տեղերը քեզ համար համահավասար են, դու վոչ ընկեր ես և վոչ ծառա: Այդ քո բերանովն ասացիր: Վոր այդպես ե, դեմ գնա այստեղից, ման արի, ուր ուզում ես:

Այն ժամանակ կատուն տխուր ձեացավ ու ասաց.

— Միթե յես յերբեք չպետք ե նստեմ խարույկի առաջ: Միթե յես չպետք ե խմեմ տաք, սպիտակ կաթը: Դու այդքան խելացի յես և այնքան գեղեցիկ: Դու այսպես խիստ չես վարվի կատվի հետ:

Կինարմատն ուրախացած ասաց.

— Յես դիտեյի, վոր խելացի յեմ, բայց յես չգիտեյի, թե գեղեցիկ եմ: Լավ, յես քեզ հետ պայման կկապեմ: Յեթե յես յերբեկցե քեզ գումար, այն ժամանակ ել դու մտիր այրը:

— Իսկ յեթե դու յերկու անգամ ինձ գովելու լինես,—հարցըց կատուն:

— Այդպես բան յերբեք չի պատահի,—ասաց կինարմատը: — Բայց բան ե, յեթե պատահի, դու կարող ես միշտ և միշտ որական յերեք անգամ կաթ խմել:

Այն ժամանակ կատուն մեջքը դուրս ցցեց ու ասաց.

— Թող բարայրի դռան կաշվե վարագույրը, այրի կրակը, մեկ ել կրակի վրա դրած այն կաթի պուտուկը վկա լինեն, հիշեն իմ թշնամու և իմ թշնամու կնոջ ասածը:

Այսպես ասաց վայրենի կատուն ու գնաց վայրի անտառները, միշտ շարժելավ իր վայրենի պոչը վայրենի առանձնության մեջ:

Յերեկյան յերբ մարդը, ձին, շունը վերադարձան վորսից, կինը վոչինչ չասեց կատվի հետ կապած պայմանի մասին, յերկյուղ կրելով, թե մի գուցե այդ բանը դուր չգա նրանց:



Զղջիկը, միայն փոքրիկ չղջիկը, վոր զլիսի վրա կախված եր լինում վերից այրում, ամեն իրիկուն թռչում եր կատվի մոտ և նորություններ պատմում նրան:

Մի անգամ չղջիկը պատմեց.

—Այրում կա մի թմբլիկ, թութուշիկ մանուկ, վորին կինարմատը շատ, շատ ե սիրում:

—Ծիր, —հարցրեց կատուն, — ի՞նչ ե սիրում մանուկը:

—Նա փափուկ բաներ շատ ե սիրում և սիրում ե, վոր իրեն խառաւ տան: Նա սիրում ե, վոր իր հետ խաղ անեն, —պատասխանեց չղջիկը:

—Ծիր, —ասաց կատուն, — նշանակում ե, ժամանակս հասել ե:

Մյուս որը յերեկոյան կատուն գնաց խոնավ, վայրի անտառի միջով և այրի մուտքի առաջ մի տեղ թագնվեց մինչև առավոտ, մինչև վոր մարդը, շունն ու ձին գնացին վորսի: Կինարմատն այդ որը սաստիկ զբաղված եր

տնային գործերով, իսկ մանուկը լաց եր լինում, խանգարում մորը՝ Մայրը դուրս եր քերել այրից յերեխային, մի բուռ պաղպուն քարեր առաջն ածել, վոր խաղ անի: Բայց մանուկն ելի լալիս եր ու լալիս:

Այն ժամանակ կատուն իր փափլիկ թաթով մի թեթև խփեց մանկան թշին, ու մանուկն սկսեց լեզվին տալ, թոթովել: Կատուն քսվում եր նրա փափլիկ վոտիկ-տոտիկներին և վիզը խտուտ տալիս իր թափիկ պոչով: Մանուկը ծիծաղումեր:

Այն ժամանակ չղջիկը, վոր գլխի վրա կախ եր ընկած այրի վերելց, ասաց:

—Ո՞, իմ տանտիկին և իմ տիրոջ կին և իմ տիրոջ վորդու մայր, ինչպես լավ ե խաղում ձեր մանկան հետ վայրի անտառի վայրենի գաղանը:

—Ինչ գազան ել վոր լինի, լավ գազան ե,—ասաց կինարմատը:— Ձես այսոր շատ զբաղված եմ, նա ինձ մեծ ծառայություն ցույց տվեց:

Ցել հենց այն ըսպեյին, հենց այն վայրկանին եր, վոր կաշվե վարագույրը դռան վերևից վայր ընկավ: Նա հիշեց կատվի և կինարմատի կապած պայմանը: Իսկ յերբ կինարմատը մոտեցավ կաշին բարձրացնելու, կատուն արդեն իր համար հանգիստ նստած եր ալրում:

—Ո՞, իմ թշնամի, իմ թշնամու կին, և իմ թշնամու վորդու մայր, — ասաց կատուն, — այս յես եմ: Դու մի անգամ ինձ գովեցիր, և յես հիմա միշտ և միշտ, ընդմիշտ կարող եմ նստել այս այրում: Բայց յես ելի այն կատուն եմ, վոր իմ գլխու ման եմ գալիս, և բոլոր տեղերն ինձ համար համահավասար են:

Կինարմատը շատ բարկացավ, շրթունքները սեղմեց ու շարունակեց մանել իր իլիկը: Մանուկը դարձյալ լաց յեղավ, վորովհետեւ կատուն մոտից հեռացել եր, և մայրն ել չկարողացավ նրա լացը կտրել: Մանուկը թափ եր տալիս փոաներն ու ձեռները, գեմքն ել կապտել եր:

—Ո՞, իմ թշնամի և իմ թշնամու կին և իմ թշնամու վորդու մայր, — ասաց կատուն, — կապիր թելը իլիկիդ կեսից և քաշիր հատակի վրայով. այն ժամանակ յես քեզ մի հրաշք ցույց կտամ, վորի վրա այնպես բարձր կծիծաղի քո մանկիկը, ինչպես հիմա լալիս ե:

—Լավ, կանեմ, — ասած կինարմատը, — վորովհետեւ ուրիշ հնար չկա: Բայց յես քեզանից շնորհակալ յեղողը չեմ:

Նու կապեց թելն իլիկի կեսին և ծայրը ձգեց հատակին: Այն ժամանակ կատուն վագեց թելի յետեից, բռնեց նրան թաթերավ, պլոր վում եր, թելը նետում եր իր վրայով, յետի թաթերավ բռնում, այնպես եր ցույց տալիս, թե թելը բաց և թողնում, հետո նորից հարձակվում եր



Նրա վրաւ իսկ մանուկը բարձր ծիծաղում եր, ինչպես առաջ լաց եր լինում: Նա չորեքթամ վազ եր տալիս կատվի յետեից, մինչև վոր հոգնեց, բոնեց կատվին, գրկեց ու պառկեց:

— Հիմա, — ասաց կատուն, — յես յերեխի համար յերգ կասեմ և մի ամբողջ ժամ կընացնեմ նրան:

Եեվ նա բարձր մլավեց, ցածր մլավեց, բարձր ու ցածր մլավեց, այնպես վոր մանուկն անուշ-անուշ, մուշ-մուշ քնեց: Կինարմատը ժպտաց ու, նայելով յերկուսի վրա, ասաց:

— Այդ Բ'նչ լավ բան արիք դու: Խոսք չկա, վոր դու շատ խելացի յես, կատու:

Հենց նույն ըսպեյին, հենց նույն վայրկյանին եր, վոր այրի խորքում խարույկի ծուխն ու մուխը քուլա-քուլա իշան առաստաղից ցած, փուշ..., վորովհետեւ հիշեց կատվի հետ կապած պայմանը:

Իսկ յերբ մուխը քաշվեց, կատուն արդեն հանգիստ նստած եր խարույկի մոտ:

— Ո՞, իմ թշնամի, իմ թշնամու կին և իմ թշնամու վորդու մայր, այդ յես եմ, վոր կամ: Արդեն յերկու անգամ ե, վոր դու ինձ գովեցիր: Հիմա յես միշտ, ընդմիշտ կարող եմ խարույկի մոտ նստել Բայց դարձյալ յես այն կատուն եմ, վորն իր գլխու ման ե գալիս, և բոլոր տեղերը նրա համար համահավասար են:

կինարմատը շատ բարկացավ: Նա արձակէց իր մազերը: Կրակին փայտ ավելացրեց: Բերեց վոչխարի թիակը և սկսեց կախարդություն անել, վոր ըլինի թե յերկրորդ անգամ ել կատվին գովի: Քիչքիչ այնպիսի լոռջուն տիրեց այլում, վոր մինչև անգամ պատլիկ մուկն ել համարձակվեց իր անկյունից դուրս զալու և վազվելու հատակի վրա:

—Ա՛, իմ թշնամի, իմ թշնամու կին,—ասաց կատուն, —ի՞նչ, դժւ կանչեցիր մկանը քո կախարդությունով:

—Ա՛յ, այ, այ... վոչ,—վախից ճշաց կինարմատը, գեն զցեց ձեռքի թիակը, ցատկեց կրակի մոտ դրած նստարանին և սկսեց շուապով իր ծամերը հյուսել, վոր մկնիկը նրանց վրայով վեր չբարձրանա:

—Այ թե ի՞նչ...—ասաց կատուն, —ուրեմն յես փորձանքի չեմ գալ, յեթե մկնիկին ուտեմ:

—Վոչ, վոչ, —ծամերը հյուսելով պատասխանեց կինարմատը: —Վորքան շուտ ուտես դրան, այնքան շատ շնորհակալ կինեմ քեզանից:

Կատուն ցատկեց, բռնեց մկանը:

—Հարցուր անգամ շնորհակալ եմ քեզանից: Մինչև անգամ մեր առաջին ընկերն ել այնքան արագ մուկ չի բռնում, վորչափ դու, —ասաց կինը:

Նույն բռնեցին, նույն վայրկյանին եր, վոր խարույկի մոտ դրած կաթի ամանը ճաքեց, յերկոտ կտոր յեղափ, չը՝ խկ, վորովհետեւ հիշեց կատվի հետ ունեցած տանտիկնոջ պայմանը: Իսկ յերբ կինարմատը նստարանից ցած թռափ, տեսափ, վոր կատուն արգեն գլուխը կախած խմում եր տաք, սպիտակ կաթը:

—Ո՛, իմ թշնամի և իմ թշնամու կին,—ասաց կատուն, —յես եմ, վոր կամ: Յերեք անգամ դու ինձ գովիցիր, և հիմա ել յես միշտ և միշտ և ընդմիշտ որսկան յերեք անգամ կարող եմ խմել տաք, սպիտակ կաթը: Բայց յես փարձյալ այն կատուն եմ, վոր իմ գլխու ման եմ գալիս, և բոլոր տեղերն ինձ համար մեկ են:

Այն ժամանակ կինարմատը ծիծաղեց, նրան մի աման կաթ տվեց ու տաց.

—Ո՛, կատու, դու ամուսնուս պես խելացի յես: Բայց մի մոռանար, վոր դու իմ մարզու և նրա ընկեր շան հետ պայման չունես, և յես չեմ իմանում, թե նրանք ի՞նչ կանեն քեզ տուն վերադառնալուց հետո:

—Ի՞նձ ինչ, —ասաց կատուն: —Միայն թե նստեմ խարույկի տաաջ ու որսկան յերեք անգամ կաթս խմեմ, պայմանին համաձայն: Նրանից հետո ի՞նչ կուգեն, թող անեն մարդն ու շունը:

Յերեկոյան յերբ մարդն ու շունը ձիու հետ վերադարձան այլը,
կինարժատը պատմեց նրանց իր և կատվի մեջ կապած պայմանի մասին,
իսկ կատուն նստել եր խարույղի առաջ ու մռմռում եր:

Այն ժամանակ մարդն ասաց.

— Այդ բոլորը շատ գեղեցիկ, միայն ինձ հետ վոչ մի պայման չէ
կապել կատուն:

Ասաց, հանեց վոտներից կաշվե վոտնամանները, վերցրեց քարե կա-
ցինը, բերեց իր ձեռքի փայտը, իրար մոտ շարեց ու ասաց.

— Հիմա մենք մեր պայմանը կապենք: Եթիե դու այրի մեջ միշտ
և միշտ և ընդմիշտ մուկ չըսնես, յես այս հինգ իրերից մեկը քո յետեկից
կշղրտեմ: Ինձանից հետո տղամարդիկ ել քեզ հետ այդպես կվարվեն:

— Այ թե ինչ, — ասաց կինարժատը, լսելով այս խոսակցությունը: —
Կատուն խելացի յե, բայց այնչափ խելացի չե, վորչափ իմ տմուսինը:

Կատուն համրեց հինգ իրերը և ասաց.

— Յես միշտ և միշտ մուկ կրոնեմ այրի մեջ այստեղ յեղածս ժամա-
նակ և գեռ ձեր յերեխի հետ ել կիսաղամ: Բայց յես դարձյալ այն կա-
տուն եմ, վոր իր զգխու ման և զալիս, և վորի համար բոլոր տեղերը հա-
մահափառար են:

— Բայց վոչ այն ժամանակ, յերբ յես մոտիկ գտնվեմ, — ասաց տղա-
մարդը: — Յեթե դու շասեյիր այդ վերջին խօսքերը, յես միշտ և միշտ
մի կողմ կդնեյի այս հինգ իրերը: Բայց հիմա վրադ կշղրտեմ վոտնա-
մաններս ու քարե կացինը, յերեք կտոր քանի Քեզ պատահելիս, այդպես
կանեմ: Յեվ այդպես կանեն ինձանից հետո յեկող բոլոր տղամարդիկ:

Հետա շունը խսոեց.

— Մի բովե պապիր: Կատուն ինձ հետ ել պայման չունի: Պայման
չունի և այն բոլոր շների հետ, վորոնք ինձանից հետո պետք ե զան: Կա-
տուն, յեթե դու միշտ և միշտ մուկ չըսնես և սիրալիր շինես մանկան
հետ, քանի դաս այրը, պետք ե յետեկիցդ ընկնեմ: Քեզ վոր բանեցի, իմա-
ցիր, վոր զգելու յեմ: Քեզ նույնը պետք ե անեն ինձանից հետո յեկող
բոլոր շները:

— Այ թե ինչ... — ասաց կինարժատը, լսելով շան խոսակցությունը: —
Սա շատ խելացի կատու յե, բայց շան շափ խելացի չե:

Կատուն այստեղ համրեց շան տատմները, վորոնք իր աչքին շատ
սուր յերևացին, ու ասաց.

— Յես միշտ և միշտ մուկ ել կըսնեմ, մանկան հետ ել սիրալիր
կլինեմ, յեթե միայն մանուկը շատ սաստիկ չի քաշի մազերիցու ու պո-



շիցաւ Բայց յես դարձյալ այն կատուն եմ, վոր իր գլխու ման և գալիս, և վորի համար բոլոր տեղերը մեկ են:

— Բայց վոչ այն ժամանակ, յերբ յես մոտիկ կլինեմ, — ասաց շունը: Յեթե դու շասեյիր այն վերջին խոսքերը, յես բերանս կփակեցի միշտ և միշտ: Իսկ հիմա, ամեն անգամ պատահելիս, քեզ կփախցնեմ ծառի վրա: Նույնը կանեն ինձանից հետո յեկող բոլոր շները:

Այն ժամանակ մարդը սաստիկ բարկացավ, շպրտեց կատվի յետնից վտանգամանները և ձեռքի փայտը, թվով յերեք կտոր: Կատուն զուրս պըրծավ այրից: Շունն ել ընկավ յետնից, փախցրեց ծառի վրա:

Յեկ այն որվանից գեսը հինգ տղամարդից յերեքը, կատվին պատահելիս, մի բան շպրտում են նրա վրա, և բոլոր իսկական շները փախցնում են նրան ծառի վրա: Բայց կատուն իր պայմանի համաձայն կատարում է իր տված խոսքը: Նա մուկ ե բռնում: Սիրալիր ե այն մտնուկների հետ, վորոնք նրա պոչից այնքան ել ամուր չեն քաշում:

Այդ բոլորը նա անում ե, բայց և մեկ-մեկ ել լուսինը ծագելիս, նա նորից դառնում է իր գլխու ման յեկող կատուն, վորի համար բոլոր տեղերը համահավասար են:



ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՅԵՎ ՎԱՎԱՐԴՈՒՄ ԵՆ

- 1) Ա. Մարտիրոսյան — **Փռոս**
- 2) Ա. Տամանյան — **Դավիթ**
- 3) Արիկ Հայրաց — **Հեքիսակ ռազմական գաղտնիքի**, մանուկամանակիկ և նրա հաստատ խոսքի մասին
- 4) Հ. Հայրապետյան — **Կոլիխողի համար**
- 5) Կղոկովսկայական պատմութեան մասին
- 6) Զինյալ — **Ջունի Լենինը**
- 7) Խնձոր Ազգիր — **Իմ զառը 1-ից 10-ը**

ՄԱՍԻՆԻՆ ՏԱԿ ԵՆ ՅԵՎ ՇՈՒՏՈՎ ԼՈՒՅՍ ԿՏԵՍՆԵՆ

- 1) Արագիլ — **Հերոս Կարենը**
- 2) Լ. Տայսոյ — **Ֆիլոսիկը**
- 3) Ռ. Բայլան — **Ժան Բրիստոֆ**
- 4) Ռուբի — **Հերոսույիկ Պալման**
- 5) Միլլիկը — **Ինչպես մենք ջարդեցինք Յուղենիչին**
- 6) Զ. Ալիքիս — **Դուկիկը լիկիպուտների մոտ**
- 7) Հ. Թումանյան — **Շուշն ու կատուն**



(084)

ԳԻՆԸ 1 ԱՌԵՐ.

ЦЕНА

11
2791

Р. КИПЛИНГ
КОШКА, ГУЛЯВШАЯ САМА ПО СЕБЕ
Гиз ССР Армении, 1934